Փորձնական ծրագրի մասնակից ուսումնական հաստատություններում իրականացված դիտարկումների ամփոփում



ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. Մասնագիտության կրթական ծրագրի նախագծում և հաստատում

Պլանավորում

- Ներկայացված փաստաթղթեր

ՄԿԾ-ի մշակման և հաստատման քաղաքականությունը, ռազմավարությունը, հայեցակարգը, ընթացակարգ(եր)ը և այլ անհրաժեշտ հիմքերը ներկայացրել են միայն որոշ կրթօջախներ : Որոշ կրթօջախներում առկա են ուսանողների և շրջանավարտների կարիքների ուսումնասիրություն կանոնակարգերը:

- Ուսումնական պլաններ

Որոշ կրթօջախներում ուսումնական պլանները չէին համապատասխանում ներկայացվող պահանջներին. բացակայում էին մասնագիտության դասիչը, շնորհվող որակավորումը:

Ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական առարկայացանկերում երբեմն խախտված էր առարկաների դասավանդման տրամաբանական հաջորդականությունը:

Իրականացում

- Որակավորում

Որոշ հաստատություններ մեկ ՄԿԾ-ի շրջանակում շնորհում են երկու որակավորում մեկ ուսումնական պլանի պայմաններում

Որոշ կրթօջախների հայեցակարգերում նկարագրված ուսումնառության ակնկալվող արդյունքները չէին համապատասխանում շնորհվող որակավորմանը:

Շրջանավարտ-մասնագետի նկարագիրը ոչ միշտ է համապատասխանում շնորհվող որակավորմանը:

- Դասընթացի ուղեցույց

Դասընթացի ուղեցույցները որոշ կրթօջախներում բացակայում էին:

- Ուսանողների և շրջանավարտների կարիքների ուսումնասիրություն

Որոշ կրթօջախներում առկա են ուսանողների և շրջանավարտների կարիքների ուսումնասիրման կանոնակարգերը, սակայն ոչ միշտ էին առկա իրականացումը փաստող հիմքերը:

- Որակի ներքին ապահովում

Որոշ կրթօջախներում արդեն ստեղծված են որակի ներքին ապահովման կենտրոններ, որոնք նոր են սկսում իրենց գործունեությունը:

- Ուսումնամեթոդական բազա

Միշտ չէ որ ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական բազան ապահովված է :

- Առարկայի մասնագիտական ուղղվածություն

Ֆոկուս խմբերում ներգրավված դասախոսների մի մասը, հաճախ հմուտ տիրապետելով իրենց առարկային, չէին պատկերացնում դրան մասնագիտական ուղղվածություն տալու անհրաժեշտությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. Մշտադիտարկում, վերանայում և բարելավում

Պլանավորում

- Մշտադիտարկման գործընթացը կանոնակարգող փաստաթղթեր

Մշտադիտարկման գործընթացը կանոնակարգող փաստաթղթերը նոր են մշակվում:

Իրականացում

- Ուսումնական պլան

Կան դեպքեր երբ դասացուցակը չի համապատասխանում ուսումնական պլանին:

Որոշ դեպքերում ուսումնական պլանները թերակատարվում են:

- Մշտադիտարկման գործիք

Իբրև մշտադիտարկման հիմնական գործիք նշվում են դասալսումները:

Գնահատում

- ՄԿԾ գնահատման, մշտադիտարկման և վերանայման կանոնակարգեր

Որոշ կրթօջախներում նոր են մշակվել ՄԿԾ գնահատման, մշտադիտարկման և վերանայման կանոնակարգեր և մեթոդական ցուցումներ:

- Ուսանողների մասնակցություն

Միշտ չէ, որ ուսանողները մասնակից են դառնում ՄԿԾ իրականացման գործընթացի գնահատմանը:

Վերանայում /Բարելավում

- Ուսումնական պլանի փոփոխություն

Որոշ դեպքերում ուսումնական պլանները և դրանցում առարկաներին հատկացվող ժամաքանակները ազատորեն փոփոխվում են ուսանողների և դասախոսների կարծիքների ուսումնասիրության հիման վրա.

- ուսումնական տարվա սկզբին նոր ընդունված ուսանողների համար

- ուսումնական տարվա ընթացքում

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3. Պրոֆեսորադասախոսական կազմ

Պլանավորում

- Դասախոսների ընտրության և մասնագիտական զարգացման կանոնակարգեր

Բոլոր կրթօջախներում առկա էին դասախոսների ընտրության կանոնակարգեր:

Երիտասարդ դասախոսների մասնագիտական զարգացման վերաբերյալ կրթօջախները ունեն կարգեր:

Իրականացում

- Երիտասարդ դասախոսների մասնագիտական զարգացում

Երիտասարդ դասախոսների մասնագիտական զարգացմանը վերաբերող կարգերում բացակայում են նրանց մասնագիտական աղապտացման խնդիրների լուծման մեխանիզմները:

- Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագրեր

Որոշ կրթօջախներ ունեն դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագրեր և գիտական գործունեությունը խթանելու մեխանիզմներ, սակայն կրթօջախի ոչ բոլոր դասախոսները ունեին վերապատրաստումը հավաստող հիմքեր:

Որոշ կրթօջախներում գործում է մենթորների/ խորհրդատուների/ դպրոց:

Ոչ բոլոր կրթօջախներում են դասախոսներն անցնում վերապատրաստում:

Գնահատում

- Դասախոսների գործունեության գնահատում

Որոշ կրթօջախներում դասախոսների գործունեության գնահատման համար իրականցնում են ուսանողների հարցումներ և դասալսումներ:

Ոչ բոլոր կրթօջախներում էին առկա դասախոսի աշխատանքի գնահատման ժամանակակից պահանջները /փաթեթները/ պորտֆոլիոները/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. Ուսուցման (դասավանդման և ուսումնառության) մեթոդներ

Պլանավորում

- **Առարկայական ծրագրեր**

Առարկայական ծրագրերում նշված էին նպատակը և խնդիրները, սակայն հստակ չէին ձևակերպված մուտքային պայմանները և ուսումնառության ակնկալվող արդյունքները:

Առարկայական ծրագրերի բովանդակությունը միշտ չէ, որ միտված է կոնկրետ մասնագիտական որակների ձևավորմանը:

Իրականացում

- **Դասընթացի ուղեցույց**

Ոչ բոլոր կրթօջախներում կային դասընթացների ուղեցույցներ: Դրանց հաճախ փոխարինում էր ուսանողի ուղեցույցը:

- **Առարկայական և պրակտիկայի ծրագրեր**

Առարկայական ծրագրերում նշված էին ուսումնառության և դասավանդման մեթոդները, սակայն բացակայում էին կամ նպատակային չէին կիրառվում համագործակցային մեթոդները:

Պրակտիկաների ծրագրերը ոչ միշտ էին հստակ ներկայացնում նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները և հանձնարարություններն ըստ գործընթացի փուլերի:

- **Ավարտական ամփոփիչ քննություններ**

Ավարտական ամփոփիչ քննությունների հարցաշարերում ընդգրված չէին առարկաների դասավանդման մեթոդիկաներին վերաբերող հարցեր:

Ավարտական ամփոփիչ քննությունների հարցաշարերում ընդգրված էին ուսանողի տեսական գիտելիքները ստուգող հարցեր, բացակայում էին ուսանողների հմտությունները և կարողությունները բացահայտող հարցեր, հանձնարարություններ:

- **Կուրսային և ավարտական աշխատանքներ**

Կուրսային աշխատանքների կառուցվածքը և բովանդակությունը ոչ միշտ էին համապատասխանում ներկայացվող պահանջներին, թեմաները ոչ միշտ էին արտացոլում մասնագիտական ուղղվածությունը և չէին խթանում ուսանողի հետազոտական կարողությունների ձևավորմանը:

Կուրսային և ավարտական աշխատանքներում օգտագործված գրականության ցանկերում բավարար չէր ներկայացված ժամանակակից մասնագիտական գրականությունը:

- **Դասի պլանավորում**

Դասախոսները ստեղծագործական մոտեցումը հակադրում են դասի նախնական պլանավորմանը:

- **Դասավանդման մեթոդներ**

Որոշ կրթօջախներում դասալսումները ցույց տվեցին, որ ուսուցման գործընթացում գերակայում են ավանդական մեթոդները: Որոշ դասախոսներ կիրառում են փոխգործուն մեթոդներ, սակայն դրանք նպատակաուղղված չէին վերջնարդյունքին:

Գնահատում

- **Պրակտիկաներ**

Պրակտիկանտերի օրագրերը չէին արտացոլում գործընթացի ողջ բովանդակությունը:

Պրակտիկայի իրականացման վերահսկումը և գնահատումը կանոնակարգման և հստակեցման կարիք ունի: Որոշ դեպքերում ուսանողները գնում էին պրակտիկայի՝ չունենալով համապատասխան գիտելիքներ առարկայի դասավանդման մեթոդիկաներից:

- **Ուսանողների և դասախոսների կարիքների վերհանում**

Կրթօջախները ունեին ուսանողների և դասախոսների կարիքների վերհանման կանոնակարգեր, սակայն միշտ չէ, որ առկա էին դրանց իրականացման հիմքերը և վերլուծությունները: Դասախոսական կազմի որակավորման խնդրի քննարկումը ծավալվում է նեղ մասնագիտական, բայց ոչ մանկավարժական հենքի վրա:

Հաստատություններում խրախուսվում էին փոխադարձ դասալսումների, կարիքների վերհանման, վերապատրաստումների վերաբերյալ կանոնակարգերի մշակումները, սակայն այդ ամենի իրականացումը վկայող հիմքերը ներկայացված չէին:

- **Ուսումնառության դինամիկա**

Չնայած որ որոշ կրթօջախներում ըստ կանոնակարգերի անհրաժեշտ են համարում մուտքային և ելքային մակարդակների համեմատությունը, սակայն դրա իրականացումը փաստող հիմքերը բացակայում էին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5. Ուսանողի գիտելիքի գնահատում

Պլանավորում

- Ուսանողի գիտելիքի գնահատման կանոնակարգ

Ուսանողի գիտելիքի գնահատման նպատակը հստակեցված չէ համապատասխան կանոնակարգերում:

Հիմնականում բոլոր կրթօջախներում մշակված էին ուսանողների բողոքները ուսումնասիրելու կանոնակարգեր, առկա էին բողոքների և առաջարկությունների արկղեր:

- Ուսանողների բողոքների ուսումնասիրություն

Իրականացում

- Գնահատման ընթացակարգեր

Կրթօջախներում առկա էին ուսանողին ներկայացվող պահանջները և գնահատման համակարգը, սակայն բացակայում էին յուրաքանչյուր ուսումնառության արդյունքին համապատասխան նկարագրված գնահատման մեթոդները և չափանիշները

- Գնահատման ձևեր

Հիմնականում կիրառվում է գնահատման ամփոփիչ ձևը: Բացակայում են հայտորոշիչ և ձևավորող գնահատման ձևերը: Քիչ է կիրառվում թղթապանակը իբրև գնահատման ձև:

- Ակադեմիական ազնվությունը

Որոշ կրթօջախներ մշակել են ակադեմիական ազնվությունը խթանելու և գրագողության դեմ պայքարելու ռազմավարություն, սակայն այդ բնագավառում արդյունավետ լուծումների ուղղությամբ որոնումները շարունակվում են:

Գնահատում

- Հետադարձ կապի մեխանիզմներ

Հետադարձ կապի մեխանիզմները գործում էին այն կրթօջախներում, որոնք նախկինում ունեցել են այդ գործընթացի իրականացման փորձ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6. Կրթական միջավայր

Իրականացում

- Ուսումնական միջավայրն ապահովող ռեսուրսներ

Հիմնականում կրթօջախներում առկա էին ուսումնական միջավայրն ապահովող անհրաժեշտ ռեսուրսներ:

Մասնագիտական գրականությունը, էլեկտրոնային ռեսուսրները որոշ դեպքերում չէին համապատասխանում որակավորմանը և բացակայում էին դրանց մշտադիտարկման մեխանիզմները:

- Խորհրդատվություն

Որոշ կրթօջախներում վերհսկվում էր ուսանողների ինքնուրույն աշխատանքը և կային ժամանակացույցեր: Ինքնուրույն աշխատանքի համար կրթօջախները տրամադրում էին համապատասխան ռեսուրսներ: Հիմնականում կրթօջախում կիրառվում էին ուսանողներին խորհրդատվության տրամադրման մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7. Հետադարձ կապի համակարգ

Պլանավորում

- **Հետադարձ կապի վերաբերյալ կանոնակարգեր**

Իրականացում

- Հետադարձ կապ շրջանավարտների և գործատուների հետ

Հիմնականում առկա են շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի ապահովման կանոնակարգերը, սակայն գործընթացի ոչ բոլոր բաղադրիչներն են իրականացվում:

Հիմնականում հետադարձ կապը ապահովվում է շրջանավարտների միությունների, կարիերայի կենտրոնների միջոցով:

- Որակի ներքին ապահովման համակարգ

Կան կրթօջախներ, որոնք համագործակցության և կարծիքների ուսումնասիրության միջոցով ապահովվում են հետադարձ կապ գործատուների հետ:

Վերանայում /Բարելավում

- Որակի ներքին ապահովման գործառույթներ

Ավարտական ամփոփիչ քննությունների հանձնաժողովների կազմում միշտ չէ որ ընդգրվում են համապատասխան գործատուներ:

Որոշ կրթօջախներում ստեղծվել են որակի ներքին ապահովման կենտրոններ, որոնց գործառույթները մշակման և հստակեցման փուլում են:

Բոլոր կրթօջախներում կան որակի ներքին ապահովման գործառույթն իրականացնող անձիք, սակայն համակարգը ձևավորման փուլում է: Անհրաժեշտություն կա ստեղծելու որակի ներքին ապահովման անկախ կառույց:

30/072010

Դիտարկման արդյունքների գրաֆիկական պատկեր



Դիտարկման արդյունքներ

Չափորոշիչ	Դիտարկման իրականացման բանաձև			
	Պլանավորում	Իրականացում	Գնահատում	Վերանայում/ բարելավում
Նախագծում և հաստատում	+	+		
Մշտադիտարկում, վերանայում	+	+	+	+
Դասախոսական կազմ	+	+	+	
Ուսուցման մեթոդներ	+	+	+	
Ուսանողների գնահատում	+	+	+	
Ուսումնական միջավայր		+		
Հետադարձ կապ	+	+		+